



ԴԱՍ 1.2 Աշխարհագրության ճյուղային կառուցվածքը: Աշխարհագրական մշակույթ և մտածողություն

1. Ընդհանուրն ուսումնասիրում է աշխարհագրական թաղանթի բաղադրիչների փոխազդեցությամբ ձևավորված բնատարածքային համալիրները, դրանց կազմը, կառուցվածքը և զարգացման ընդհանուր օրինաչափությունները:

Լանդշաֆտագիտությունն ուսումնասիրում է աշխարհագրական թաղանթի համեմատաբար փոքր տարածքներ՝ բնատարածքային համալիրները, դրանց կառուցվածքը և տարածաժամանակային փոփոխությունները:

Հնէաշխարհագրությունը (հնաշխարհագրություն–paleogeography (պատմական երկրագիտություն))–հունարեն՝ palaios–հին, ուսումնասիրում է Երկրի ֆիզիկաաշխարհագրական պայմանները երկրաբանական նախորդ դարաշրջաններում, աշխարհագրական թաղանթի և լանդշաֆտների զարգացման օրինաչափությունները, մարդու և բնության փոխազդեցության պատմությունը, **մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը:**

2. Հասարակական աշխարհագրությունը (սոցիալ–տնտեսական) աստիճանական զարգացման (էվոլյուցիոն) տևական ճանապարհ է անցել: Այն 18–րդ դարում անվանում էին տնտեսական աշխարհագրություն (ռուս գիտնական Մ. Լոմոնոսովն է այդպես անվանել): Նա կարևոր նշանակություն էր տալիս աշխատանքի աշխարհագրական (տարածքային) բաժանմանը և առանձին տարածքների տնտեսության մասնագիտացմանը: Հարկ է նշել, որ այս երևույթները նոր էին սկզբնավորվում և կրում էին մակերեսային բնույթ: Գիտության այս ճյուղի մասին խոսելիս պետք է կարևորվի նաև այն հանգամանքը, որ տնտեսության զարգացման տարածական տարբերությունները պայմանավորված են ոչ միայն բնական միջավայրով ու բնատեսուրսային գործոններով, այլև՝ հասարակության զարգացման մակարդակով, ժողովուրդների ազգային–մշակութային (էթնոժառանգական) առանձնահատկություններով, հասարակական ու արտադրական հարաբերությունների բնույթով ու կառուցվածքով և այլն: Այս ամենից հետևում էր, որ «տնտեսական աշ-

խարհագրություն» անվանումը չէր համապատասխանում գիտության բովանդակությանը: 1970–ական թվականների կեսերից սկսեցին անվանել «տնտեսական և սոցիալական աշխարհագրություն», այնուհետև՝ «հասարակական աշխարհագրություն», քանի որ ուսումնասիրում է նաև աշխարհագրական թաղանթում ընթացող սոցիալական, հասարակական երևույթները և գործընթացները, դրանց կապերն ու փոխներգործությունները:

3. Ընդհանուրի մեջ մտնում են հասարակական աշխարհագրական երկրագրությունը (տարածաշրջանային աշխարհագրություն) և քաղաքների աշխարհագրությունը: Ճյուղային են **բնակչության աշխարհագրությունը, տնտեսության և դրա առանձին ճյուղերի ու ենթաճյուղերի աշխարհագրությունը, սոցիալական աշխարհագրությունը, քաղաքական աշխարհագրությունը, մշակույթի աշխարհագրությունը** և այլն:

4. Վերջին տասնամյակներում հասարակությունը զարգանում է աննախադեպ տեմպերով: Այն հատկապես պայմանավորված է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների արագ զարգացմամբ: Այն հիմք է դարձել նոր, **համամոլորակային տեղեկատվական** (գլոբալ տեղեկատվական) տեսակի հասարակության ձևավորման համար: Կրթությունը, գիտելիքները, տեղեկատվությունը և հեռահաղորդակցումը համարվում են ոչ միայն անձի, անհատի, այլև պետության, հասարակության զարգացման ու բարեկեցության հիմքը: Սա մի հատուկ ռեսուրս է, որն ավանդական բնութագրեր չունի, այն ոչ միայն չի նվազում ու չի սպառվում, այլև դրա քանակը մշտապես ավելանում է: Մարդկությունը մի կողմից տեղեկատվական առաջընթացի շարժիչն է, մյուս կողմից՝ բարիքների սպառողը:

5. Աշխարհագրության ճյուղերի կապը միմյանց և գիտության այլ ճյուղերի հետ: Կան գիտություններ, որոնք գլխավորապես ուսումնասիրում են երևույթների փոփոխությունները ժամանակի մեջ (օրինակ՝ պատմություն), գիտություններ կան, որ ուսումնասիրում են տարածաժամանակային փոփոխությունները (օրինակ՝ փիլիսոփայություն, աշխարհագրություն), կան գիտություններ, որ ուսումնասիրում են գլխավորապես երևույթների ներքին կառուցվածքն ու օրինաչափությունները (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն): Հետևաբար բոլոր այն գիտությունները, որոնք ուսումնասիրում են երևույթների կառուցվածքայնությունը, փոփոխությունները տարածության և ժամանակի մեջ, այս կամ այն չափով կապված են միմյանց հետ:

Աշխարհագրության բոլոր ճյուղերն ու ենթաճյուղերը կապված են միմյանց հետ, բայց մենք կդիտարկենք բնական և հասարակական աշխարհագրության

կապերը: Հասարակական աշխարհագրությունը բնակչության և տնտեսության զարգացումն ու տեղաբաշխումը, հասարակական երևույթներն ուսումնասիրում է կոնկրետ տարածքներում, որոնք ունեն որոշակի բնակլիմայական պայմաններ և բնատեսուրսային գործոններ, աշխարհագրական միջավայր կամ լանդշաֆտներ, բնական պայմանների և ռեսուրսների տնտեսական գնահատում, բնօգտագործման ուղղություններ և բնապահպանական առանձնահատկություններ և այլն: Հետևաբար նշված գիտությունը չի կարող իր առջև ծառայած խնդիրները լուծել առանց ֆիզիկաաշխարհագրական տվյալների: Բնական աշխարհագրությունն էլ իր հերթին Երկրի լանդշաֆտային թաղանթն ուսումնասիրում է ոչ միայն հանուն գիտության զարգացման, այլև բնական պայմանները և ռեսուրսները նյութական արտադրությանը, հասարակության զարգացմանը, մարդու գործնական շահերին, բարեկեցությանը, առողջությանը և անվտանգությանը ծառայեցնելու և սերունդներին բարենպաստ շրջակա միջավայր փոխանցելու նպատակով:

Աշխարհագրությունը՝ որպես հասարակական գիտություն, սերտ կապեր ունի այն գիտությունների հետ, որոնք զբաղվում են հասարակական կյանքի տարբեր ոլորտների ուսումնասիրմամբ՝ տնտեսագիտություն, պատմություն, սոցիոլոգիա, վիճակագրություն, քաղաքագիտություն, հասարակագիտություն, մշակութաբանություն: Օրինակ՝ վիճակագրական տվյալները հիմք են տնտեսական և սոցիալական երևույթների և գործընթացների վերլուծության համար:

Աշխարհագրությունը կապված է **մաթեմատիկայի** հետ: Բավական է ասել, որ մասշտաբը և քարտեզագրական պրոյեկցիաները քարտեզների մաթեմատիկական հիմքն են: Մաթեմատիկական կիրառվում է գրաֆիկներ կառուցելիս, ծավալ, մակերես, անկյուն, հեռավորություն ու քանակ, ուղղության անկյուններ, ազիմուտներ, աշխարհագրական կոորդինատներ (նաև ըստ GPS-ի), տեղական, գոտիական և համաշխարհային ժամանակ որոշելիս: Մաթեմատիկական կարողանում է լուծել խնդիրներ՝ գետի ծախսի, հոսքի, օդի բացարձակ և հարաբերական խոնավության, վայրի բացարձակ և հարաբերական բարձրության, մթնոլորտային ճնշման ու ջերմաստիճանի ռեսուրսաապահովվածության, բնակչության թվի, շարժի, միջին խտության, գաղթային (միգրացիոն) լարվածության, գաղթի ուժգնության (միգրացիայի ինտենսիվության) վերաբերյալ և այլն:

Մաթեմատիկական վերլուծության մեթոդները կիրառվում են երևույթների շարժը տեսնելու, երկրահամակարգերի ուղիղ և հակադարձ կապերը գնահատելու, բնակչության վերարտադրության, բնակչության գաղթի և տարաբնակեցման մոդելներ կազմելու համար և այլն:

Ֆիզիկայի հետ կապը փոխադարձ է, որովհետև այս գիտությունը ևս ու-

սումնասիրում է բնության երևույթները, դրանց պատճառները, ընդհանուր օրինաչափությունները, տարածումը, նյութերի հատկությունները, շարժման օրենքները և տեղի է ունենում տեղեկատվության փոխանակում: Ֆիզիկան է գաղափար տալիս Երկրի տիեզերական ձգողական դաշտի, մագնիսական դաշտի, մագնիսական բևեռների վերաբերյալ, կարողանում է բացատրել օդի ջերմաստիճանի և ճնշման կապը, կիրառել ջերմային հաշվեկշռի հավասարումը, տարբերակում է ջրի լամինար և մրրկային շարժումները, բացատրում ողողամաշման, քայքայման (էրոզիա) ուժգնությունը, գետերի ջրաէներգետիկական ներուժը և այլն:

Քիմիայի հետ կապերն ավելի սերտ են, որովհետև աշխարհագրությունը ևս ուսումնասիրում է քիմիական տարրերը, դրանց տարածումը, հատկությունները, նյութերի քիմիական փոխազդեցությունները, շրջակա միջավայրի վրա քիմիական նյութերի ազդեցությունը: Քիմիական արդյունաբերությունն արդյունաբերության ճյուղ է, որի ենթաձյուղերը, արտադրությունները, տեխնոլոգիական առանձնահատկությունները, այլ ձյուղերի հետ կապերը, զարգացման և տեղաբաշխման օրինաչափություններն ուսումնասիրում է աշխարհագրությունը:

Կապը **կենսաբանության** հետ: Կենսաբանությունը, եթե ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների ծագումը, զարգացումը, կառուցվածքը, կապերը միմյանց հետ, տարածումը, ապա աշխարհագրությունն ուսումնասիրում է կենդանի և անկենդան բնությունը, դրանց կապերը և փոխազդեցությունները, աշխարհագրական տարածվածությունը, կենսոլորտը՝ որպես աշխարհագրական թաղանթի բաղադրամաս:

Կապն **աստղագիտության** հետ: Աստղագիտությունն օգնում է որոշելու հորիզոնի կողմերը, հաշվարկելու ձիշտ ժամանակը, որոշելու վայրի աշխարհագրական կոորդինատները, մակընթացային երևույթները, Երկրի պտույտների տեսակները՝ աշխարհագրական հետևանքները բացատրելու, բևեռային գիշերների և ցերեկների տևողությունը, ջերմության բաշխումը որոշելու համար և այլն:

Կապը **համաշխարհային պատմության** հետ: Այս գիտությունը ցույց է տալիս Աշխարհագրական մեծ հայտնագործությունների պատմական նշանակությունը, գաղութային համակարգերի, կայսրությունների առաջացման ու փլուզումների, գաղթերի և համաշխարհային պատերազմների ազդեցությունն աշխարհի քաղաքական քարտեզի ձևավորման, տարածքի պատմամշակութային զարգացման վրա, բնակչության վերարտադրության, գաղթի գործընթացների կապը ագրարային, արդյունաբերական, հետարդյունաբերական և տեղեկատվական հեղափոխությունների պատմական գործընթացների հետ և այլն:

Կապը **հասարակագիտության** հետ: Կապն արտահայտված է պետության հատկանիշների և գործառույթների, պետությունների կառավարման ձևի և կառուցվածքի մեջ:

Այսպիսով, միմյանց կապված գիտություններն իրարից փոխառնում և օգտագործում են գիտական տեսություններ, փաստական տվյալներ և հարստանում են:

Աշխարհագրական մշակույթ

Աշխարհագրական մշակույթ ասելով հասկանում ենք աշխարհագրական բոլոր գիտությունների համար ընդհանուր նպատակը, մեթոդաբանությունը և յուրահատուկ գիտական լեզուն: Աշխարհագրական մշակույթի բաղադրիչներն են՝

- ա) աշխարհի աշխարհագրական պատկերը, բնութագիրը,
- բ) աշխարհագրական մտածողությունը,
- գ) աշխարհագրական հետազոտությունների մեթոդները,
- դ) աշխարհագրության լեզուն:

Աշխարհի աշխարհագրական պատկերը բազմակողմանի ներկայացնում է երկրի աշխարհագրական թաղանթի, նրա ոլորտների զարգացման օրենքներն ու օրինաչափությունները՝ մարդկության շահերին հնարավորինս ծառայեցնելու նպատակով: Մրա առանցքը հասարակության արդյունավետ տարածքային կազմակերպումն ու տարածքային համակարգերի կառավարումն է, բնօգտագործումը, բնապահպանությունը, բնության վերափոխումը և աշխարհագրական կանխատեսումը:

6. Աշխարհագրությունն ունի գիտական հետազոտության սեփական մեթոդները (կուսումնասիրենք հաջորդ դասին) և հատուկ գիտական լեզուն, որն ընդգրկում է չորս բաղադրիչ՝

- ա) հասկացություններ և եզրույթներ,
- բ) փաստեր, թվեր, տարեթվեր, իրադարձություններ,
- գ) աշխարհագրական տեղանուններ (տոպոնիմիա) և տեղանվանաբանություն (տոպոնիմիկա). սա ցույց է տալիս տեղանունների ծագումը, պատմությունը և ստուգաբանությունը,
- դ) աշխարհագրական հատուկ բնութագրեր:

Գիտության լեզվի յուրահատուկ բաղադրիչ է քարտեզը, քանի որ աշխարհագրական յուրաքանչյուր հետազոտություն քարտեզագրվում է, սկսվում և ավարտվում է քարտեզով: